№ 70 ԿԻՐԱԿԻ, 5 ԱՊՐԻԼԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 5 ԱՊՐԻԼԻ № 70

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կօպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կը լինեն 10 ռ. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանչվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դօկումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սգանօք յայտնում է ի լուր հասարակութեան, որ ապրիլ ամսի 7-ին Սուրբ-Նշան եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

ԱՒԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆԻ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳԸ։

(և.) 213. 2—1

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎՍԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Բարձր Հովանաւորութեան տակ գտնվող „Պատերազմից Վնասվածներին Օգնող Հայկական Կենտրոնական Կոմիտէն“ և ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ., որոնք գործում են միացած, շարունակում են ընդունել նուիրատուութիւններ փողով և իրերով հայ գաղթականների օգտին։

Նուէրները ուղարկել հետևեալ հասցէով՝ 1) Կոմիտէի գանձապահ պ. Գ. Ծուրինեանին, Тиф. Ком. Банкъ. 2) Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Խորհրդին, Абасъ-Абадская площ., № 7. 3) «Հորիզոն»-ի խմբագրութեան, իսկ իրերը միայն՝ Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակի հասցէով։
առ. (օ. մ.) 181. 5—5

Մայիսի 1-ից բացվում է Պ. Զ. Գ. ԱՐՋԵՎԱՆԻՋԵԻ
ՅԱԳՎԵՐԻՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ 2-դ սեզօնը

Դպրոցը գտնվում է եղևնի անտառում, Բակուրեան գծի Ցագվերի կայարանի մօտ։ Ընդունվում են 6—13 տարեկան երկու սեռի թոյլակազմ երեխաներ։ Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Թիֆլիսում իրանից՝ պ. Արջեվանիձէից,
առ. (կ.) Молоканская ул. № 27, երեկոյեան ժամը 4—6-ը։ 203. 2—1

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ

ցանկանալով կազմակերպել բժշկական սանիտարական խումբ Ալաշկերտի շրջանը վերադարձող գաղթականների համար, խնդրում է համաձայնվող բժիշկներին, ֆելշերներին և սանիտարներին դիմել կոմիտէին՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. № 7.
առ. (հ. ու.) 211. 3—1

ՆԵՐԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վարօրօք գրվելու պայմանով։ Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարուլթինեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Վ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Պ. Տահպարոնեանց
(Ն. Կ.) առ 970. 100—43

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաբաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. $12^1/_2$—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ն.Հ.Կ.) առ. 784. 100—85

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Սակաւաթիւ օրինակներ հետևեալ հրատարակութիւններից

1) ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Գր. Արծրունու, գ. 20 կ.
2) ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ, др. Гр. Арцруни, переводъ А. Аракелянца. . . . գ. 35 կ.
3) DIE HUNGERSNOTH IN TURKISCH-ARMENIEN, von dr. Gr. Arzruni, übers. von A. Amirchanjanz . . գ. 20 կ.
4) ВОСТОЧНЫЙ ВОПРОСЪ, др. Гр. Арцруни . . . գ. 05 կ.
5) ЭКОНОМИЧЕСКІЯ ПЕРСПЕКТИВЫ ВОСТОЧНОЙ АНАТОЛІЙ, Ал. Калантаръ . . գ. 25 կ.
6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, Գ. Տէր-Թուբինեանի, . . . գ. 20 կ.
7) ՀԱՅԿ. ԽՆԴԻՐՆ ԵՒ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՀԱՅՈՑ, Առ. Սարուխանի . . գ. 2 ռ. 50 կ.
8) ՀԱՅՔ Ի Կ. ՊՕԼԻՍ 20-Դ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ, Արծրունու, . գ. 25 կ.

Վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(7) 0—1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
3 ապրիլի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև-ծովի վրա ապրիլի 2-ին մեր ականանաւերը Անատոլիայի ափերի մօտ ոչնչացրին 4 շոգենաւ, որոնցից 2-ը բեռնված էին քարածուխով, և մի քանի առագաստանաւ, և հրացանաձգութիւն ունեցան Զանգուլդակի մօտ մարտկոցների հետ։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
3 ապրիլի

ՓԱՐԻԶ.—Պաշտօնապէս ազդարարված է. «Ֆրանսիական մի յածանաւ ապրիլի 2-ին առաւտը քանդեց երկաթուղային մի կամուրջ, որ Ակկա քաղաքը միացնում էր Սիրիայի ներքին երկաթուղային ցանցի հետ»։

(Լրագիրներից)

◆ Թիւրքաց կառավարութիւնը Կ. Պօլսի թիւրք ազգաբնակութեանը նախապատրաստում է այն անխուսափելի մտքին, թէ դաշնակից նաւատորմը կարող է մտնել Դարդանէլ։

◆ Կ. Պօլսում տիրում է վտանգաւոր կացութիւն։ Թիւրք խուժանը գայրացած է դէպի քրիստոնեաները. կատաղած երկիւղը մեծ մտատանջութեան մէջ է ձգել մանաւանդ յոյն և հայ ազգաբնակութեան։

◆ Աթէնքից հեռագրում են, որ «Բրէսլաու»-ի հրամանատարը խեղդվել է։

◆ «Н. В.»-ին հաղորդում են, որ կայացել է համաձայնութիւն Թիւրքիայի և Բուլղարիայի միջև, որի ուժով Միդիա—Էնոս գիծը տրվում է Բուլղարիային։

◆ Թիւրքերը շարունակում են ամենամեծ եռանդով ամրացնել Զմիւռնիան։

◆ Անգլիական մի աէրօպլան աջողութեամբ ռմբակոծել է Զմիւռնիայի բերդերը։

◆ Զմիւռնիա են եկել 85 գերմանացի օֆիցեր։

◆ Թիւրքերը ամրացնում են Ադրիանուպօլիսը։

◆ Թիւրքերը Սիրիայի հիւսիսում կենտրոնացրել են 200,000 զինուոր։

◆ «Բրէսլաուն» Կ. Պօլիս է վերադարձել լուրջ վնասուածքներով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄՕՏԱՒՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

(Յօդուած Պ. Ն. Միլիւկովի)

«1894—1896 յիշատակելի թւերից, երբ հայերը բարբարոսական ջարդի ենթարկվեցին Փոքր Ասիայում և նոյն Կ. Պօլսում, այդ դրութիւնը ոչնչով չը փոխվեց դէպի լաւը։ Հայկական ռեֆորմների մասին զեկուցումը, որ հրատարակեց Աբդուլ-Համիդը 1895 թ. հոկտեմբերի 20-ին, Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, մնաց որպէս մեռած տառ։ Հողային հարցը սրվում է օրէ-օր։ Հողերի մեծ մասը գրաւել և գրաւում են քիւրդերը, և իշխանութիւնները ոչ միայն չեն արգելում, այլ անգամ հովանաւորում և աջակցում են այդ գործերին։ Մեր հիւպատոսները միահամուռ վկայում են քիւրդերի կատարած ջարդերի և կողոպուտների մասին, հայերին սպանելու, հայ կանանց բռնի կերպով իսլամ դարձնելու մասին, ըստ որում յանցաւորները գրեթէ երբէք պատասխանատուութեան չեն ենթարկվում»։

Անհնարին է մի քանի խօսքով աւելի լաւ նկարագրել Թիւրքահայերի իսկական դրութիւնը, քան այդ արված է Կ. Պօլսի մեր դեսպանի 1912 թ. նոյեմբերի 26-ի հաղորդագրութիւնից առաջ բերված տողերում, որոնցով բացվում է նորերս «Հայաստանի ռեֆորմների մասին» հրատարակված Նարնջագոյն Գիրքը։ Նոյնպէս որոշակի, ինչպէս հիւանդութեան դիագնօզը, նոյն հաղորդագրութեան մէջ մատնացոյց է արվում և բժշկութեան միջոցը։

«Հայկական վիլայէթները մեր կողմից գրաւելը, որի մասին երազում են շատ հայեր, ներկայ րօպէում (1912 թ.) հանդիսանում է վաղաժամ։ Բայց բռնելով ռեֆորմների ճանապարհը Թիւրք կայսրութեան սահմաններում, չը պէտք է մոռանալ 1895 թ. հայկական ռեֆորմների մասին եղած օրէնքի ողբալի վիճակը և ստեղծել հաստատ երաշխաւորութիւն հայկական գաւառներին առաջարկված բարելաւումների համար, դնելով այդ բարելաւումները մեր կամ եւրոպական գործակալների իսկական վերահսկողութեան տակ։ Դրա համար հարկաւոր է, սակայն, հաշիւ տեսնել հնարաւորութեան հետ, որ Թիւրքիայում ներկայումս գոյութիւն ունեցող անիշխանութեան օրով՝ ռեֆորմները չեն մտցնի ցանկալի հանգստութիւնը, և պատրաստ լինել, որ մեր զօրքերի երևալը այդ շրջաններում գուցէ անհրաժեշտ լինի»։

Այստեղ խօսվում է հայկական էպօպէի երեք փազիսի մասին. 1) ռեֆորմների ճանապարհ, 2) բարելաւումների երաշխաւորութիւն եւրոպական գործակալների վերահսկողութեամբ և 3) ռուս զօրքերի հանդէս գալը, այսինքն Թիւրքաց-Հայաստանը գրաւելը։ Այս էպօպէի առաջին երկու կէտը այժմ բոլորովին վերջացել են, երրորդը սկսում է ընդարձակվել մեր աչքերի առաջ և նրա համար, որպէս դրա բնական հետևանք, պէտք է գայ և չորրորդ կէտը՝ Թիւրքաց լծից ազատվելուց յետոյ հայկական վիլայէթների վերջնական կազմակերպութիւնը Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ։

Մեր մտքերը բնականաբար պատվում են այս վերջին կէտի շուրջը։ Դրական որևէ բան ասել նրա մասին՝ ներկայումս չափազանց դժուար է։ Բայց, գուցէ, կողմնակի մի քանի ցուցմունքներ այն մասին, թէ Ռուսաստանը ինչպէս կարող է կազմել Թիւրքաց Հայաստանը Թիւրքիայի պարտութիւնից յետոյ, հնարաւոր կը լինէր քաղել այն բանից, թէ ինչպէս էր կամենում իսկապէս Ռուսաստանը ապահովել հայկական վիլայէթների խաղաղ գոյութիւնը Թիւրքաց սուվէրէնիտէտի գոյութեան դէպքում։

Ինչպէս յայտնի է այժմ ամենայն մանրամասնութեամբ Նարնջագոյն Գրքից, Կ. Պօլսի ռուսաց դիպլօմատիան 1913 թ. յունիսին Հայաստանի ռեֆորմների ընդարձակ ծրագիր առաջարկեց, որը պատրաստված էր իրանց հայերի աջակցութեամբ և հիմնված 1880 և 1895 թւերին եւրոպական պետութիւնների մշակած նախորդ ծրագիրների վրա։

Ռուսական ծրագիրը քննվեց յուլիսի 2—24-ը Կ. Պօլսի դեսպանութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութեան մէջ և յամառ ընդդիմադրութիւն առաջացրեց գերմանական ներկայացուցչի կողմից։ Հարկ եղաւ այդ թողնել մի կողմ և այն կէտերի հիման վրա, որոնցով աջողվեց ձեռք բերել բոլոր պետութիւնների համաձայնութիւնը, դրանց թւում և Գերմանիայի, կազմել նոր, նշանաւոր չափով կրճատված ծրագիր։ Այդ երկրորդ ծրագիրը, սակայն, նոյնպէս հանդիպեց առարկութեան Բ. Դրան կողմից, որին պաշտպանում էր Գերմանիան։ Կ. Պօլսի մեր դիպլօմատիայի երկար աշխատանքներից և ջանքերից յետոյ միայն աջողվեց 1914 թ. յունվարի 26-ին Բ. Դրան հետ վերջացնել այն պայմանագիրը, որի մէջ վերջնականապէս արվեցին 6 վիլայէթների ռեֆորմների սկզբունքները։ Բայց այդ ռեֆորմները իրականացնելուն պէտք է հետևէին ոչ անմիջապէս պետութիւնները, այլ Բ. Դրնից հրաւիրված, պետութիւնների ցուցմունքով, «ընդհանուր վերատեսուչները»։ Բ. Դուռը դրանով օգտվեց, որպէսզի կանգնեցնի ռեֆորմները։ Նա Եւրոպայից ծառայութեան կանչվածների հետ (1914 թ. մայիսի 10-ին), հօլլանդացի Վեստենենկի և նօրվեգիացի Հօֆֆի, կապեց այնպիսի մի պայմանագիր, որը կապում էր նրանց ձեռք ու ոտքը և նրանց դարձնում թիւրք պաշտօնեաներ։ Երբ սկսվեց պատերազմը, այս երկու անաջողակ «ընդհանուր վերատեսուչները» վերադարձան տուն, և ռեֆորմների հարցը վերջնականապէս վերացվեց։

Իսկ ինչից սկսել այժմ, երբ հարցը, շնորհիւ Թիւրքաց սխալների, մնացել է բոլորովին բաց, և երբ պէտք է ամեն ինչ նորից սկսել։ Հեռու գնա՞լ արդեօք 1914 թ. յունվարի 26-ի պայմանագրից, որի մէջ ռեֆորման հանդէս է գալիս կըրճատված և աղաւաղված ձևով, թէ՞ վերադառնալ Ռուսաստանի սկզբնական առաջարկութիւններին, որոնք չիրականացան միայն Գերմանիայի հակառակ գործելու հետևանքով։

Այս հարցի պատասխանի համար յիշենք, թէ ինչումն է կայանում տարբերութիւնը երկու նախագծերի, այսինքն սկզբնականի՝ ընդարձակի, և յետագայի՝ կրճատվածի։

Ռուսական ծրագիրը Հայաստանի 6 վիլայէթներից կազմում էր մի առանձին շրջան շրջանային ժողովով, որը օրէնսդրական ընդարձակ իրաւունքներ էր ունենալու տեղական գործերի վերաբերմամբ և որին տրված էին լինելու լայն լիազօրութիւններ գործադիր իշխանութեան պետի կամ նահանգապետի կողմից։

Յունվարի 26-ի պայմանագիրը Թիւրքաց Հայաստանը բաժանում էր երկու շրջանի, մէջ առած Տրապիզօնի 7-րդ զուտ մուսուլմանական վիլայէթը։ Իւրաքանչիւր շրջան պէտք է ունենար իր ներկայացուցչական առանձին ժողովը՝ առաւել սահմանափակ իրաւասութեամբ և գործադիր իշխանութեան իր առանձին ներկայացուցիչը, «ընդհանուր-վերատեսուչները», որոնք ամեն կարևոր հարցերում կապված պէտք է լինէին Թիւրքաց մինիստրների խորհրդի հետ։

Այս երկու օրինակներից մի մեկի ձևով պէտք է կազմվի Թիւրքաց Հայաստանը, երբ խընդիրը իր վրա կը վերցնի անմիջապէս Ռուսաստանը։ Պարզ է, որ երկրորդ օրինակը ունի միայն կօմպրօմիսսի նշանակութիւն, զուրկ ամեն տեսակ ներքին իմաստից և հետևողականութիւնից։ Վերցնելով առանձին մի վիլայէթ, ի հարկէ, չի կարելի կանգնել երկու շրջանի վրա, այլ պէտք է գնալ մինչև վերջը, մինչև Թիւրքաց Հայաստանի միակ շրջան ստեղծելը։

Մի այլ շրջանում, ազգաբնակութեան ազգային-կուլտուրական իրաւունքները ապահովելու շրջանում, Ռուսաստանը բաղդաւոր էր, քան ընդհանուր բարեկարգութեան շրջանում։ Այստեղ պետութիւնները ընդունում և ճանաչում էին դպրոցի և լեզուի իրաւունքը, իսկ Թիւրքիան արդէն չէր առարկում նրա համար, որ այդ իրաւունքները որոշ չափով դեռ սկզբում պատկանում էին առանձին ազգութիւնների կրօնական համայնքներին։ Ռուսաստանը պնդում էր միայն այդ իրաւունքների յետագայ ընդարձակման վրա։ Այդպիսով, անգամ 1914 թ. յունվարի 26 ի պայմանագրի մէջ մտցվեցին որոշումներ, որոնք ապահովում էին մայրենի լեզուով մասնաւոր դպրոցների գոյութիւնը և իւրաքանչիւր ազգութեան մասնակցութիւնը վիլայէթի դպրոցական բիւջէին՝ այդ ազգութեան վճարելիք դպրոցական հարկերի համեմատական չափով. ժողովրդին ազդարարել օրէնքները, ուկազները և պաշտօնական գրութիւնները տեղական բոլոր լեզուներով. թարգմանել դատավորների լեզուով դատարանի որոշումները. վերջապէս, թոյլ տալ կողմերին, ընդհանուր վերատեսչի համաձայնութեամբ, գործածելու մայրենի լեզուն դատարանի և ադմինիստրացիայի հետ գործ ունենալու ժամանակ։

Պարզ է, որ այսօրինակ որոշումները հանդիսանում էին, անգամ Թիւրքերի մինիմալ զիջումի դէպքում, այնքան անվիճելի, որ մօտենալ նրանց կրճատելու նպատակով Թիւրքաց Հայաստանի ապագայ կազմակերպութեան դէպքում, այդ կը լինէր միանգամայն անմտութիւն։

Կան, վերջապէս, դեռ մի շարք որոշումներ, որոնց Ռուսաստանը մեծ դժուարութեամբ պաշտպանում էր հայերի համար Թիւրքիայի հետ ունեցած պայմանագրում։ Դրանք այն որոշումներն են, որոնք երաշխաւորում էին հայերին տեղացի գերակշռող—ոչ միայն թւականօրէն, այլ և քաղաքականօրէն, մասամբ և իրանց սօցիալական դիրքով—ազգաբնակութեան՝ թիւրքերի և քիւրդերի բռնութիւնից։ Ընդհանուր սկզբունքը, որի վրա պնդում էր, Ռուսաստանը, որպէս հայ ազգաբնակութեան երաշխիքի վրա, էր ազգագրական սկզբունքը՝ ադմինիստրացիայի, ոստիկանութեան, ժանդարմերիայի մէջ հաւասար պաշտօն ունենալու մասին, նաև հաւասարութիւն տեղական ինքնավարութեան մէջ։ Քրիստոնեաները և մուսուլմանները պէտք է նշանակվեն և ընտրվեն այդ բոլոր տեղերում՝ պաշտօնների համար, հաւասար թւով։ Թիւրքիան յամառօրէն կռւում էր Ռուսաստանի տրամադրութեան դէմ, որ սա ունէր այդ հարցի վերաբերմամբ, և մասամբ յաղթեց, ձեռք բերելով բոլոր վիլայէթների ազգաբնակութեան տարբեր մասերի համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը, բացի Վանի, Բիթլիսի և (պայմանով, այն դէպքում եթէ ազգաբնակութեան ցուցակագրութիւնը վերջանայ մի տարվայ ընթացքում) Էրզրումի վիլայէթների։ Նա պնդում էր նոյնպէս իրականացնելու հաւասարութեան սկզբունքը ոստիկանութեան և ժանդարմէրիայի մէջ պաշտօններ ունենալու վերաբերմամբ, տեղ լինելու դէպքում։

Այս որոշումների վիճակը, պարզ է, պէտք է կախված լինի այն բանից, թէ որպիսի սկզբունքների վրա պէտք է կազմվի Թիւրքաց Հայաստանի ադմինիստրացիան Թիւրքաց սուվէրէնիտէտը վերացնելուց յետոյ։ Նախավճռել այդ հարցը ներկայ րօպէին չափազանց դժուար կը լինէր։ Կարելի է միայն անկասկած համարել, որ այն անիշխանութիւնը, որը առիթ է տւել այսօրինակ ձևական երաշխաւորութիւնների, նոր կարգերի մէջ շարունակվել չի կարող։ Ազգաբնակութեան իւրաքանչիւր մասի օրինական իրաւունքները պէտք է պաշտպանութիւն գտնեն, որ չէին գտնում Թիւրքաց ռէժիմի օրօք։

Այս հարցի հետ կապված է և մի ուրիշ բան. վերացնել երկրի նախկին տէրերի սիստեմատիկական բռնութիւնները քրիստոնեայ բայաների վրայից, մանաւանդ հողային գրաւումների և մուսուլմանների հայերի հողերը նորից գաղթելու ժամանակ։ Անգամ յունվարի 26-ի պայմանագրում հողային վէճերի լուծումը յանձնվում էր ընդհանուր-վերատեսուչների ուղղակի հսկողութեան։ Ներկայ պայմաններում վերակազմված դատարանը, ադմինիստրացիան և տեղական օրէնսդրութիւնը այդ շրջանում մեծ աշխատանք ունեն անելու։ Չեմ խօսում արդէն ապագայում լինելիք անիրաւութիւններից նախազգուշանալու մասին։ Բայց իրաւունքների վերականգնումը, որ խախտվել էին մօտ անցեալում, պէտք է կազմի Թիւրքաց Հայաստանի նոր կազմակերպութեան անմիջական աշխատանքը։

Այստեղ գծված են միայն ընդհանուր գծերը ապագայ կազմակերպութեան և ընդգծված են միայն ամենակարևոր հարցերը։

Ես դիտմամբ չը մտայ յետագայ մանրամասնութիւնների մէջ, որոնք կարող էին լինել վիճելի և որոնց մասին վէճը վաղաժամ է։ Ինչն ըստ էութեան պարզ է, որ Ռուսաստանը Թիւրքիա չէ, և որ այն միջոցները, որոնք ձեռք էին առնվում Թիւրքիայի դէմ մեր նախկին ծրագիրների մէջ, միտք չունի ձեռք առնել Ռուսաստանի դէմ, այսինքն հէնց իրանց դէմ։ Բայց պէտք է յիշել և մի ուրիշ բան։ 1913 Թ. յունիսի 8-ի ծրագիրը կազմված է հայ հասարակութեան մօտիկ մասնակցութեամբ։ Առանց կարիք լինելու նահանջել նրանից՝ կը նշանակէր տատանման ենթարկել համակրութեան և վստահութեան այն հաստատ զգացմունքը, որով Ռուսաստանը օգտվում է ներկայ րոպէին հայ ազգաբնակութեան բոլոր խաւերում և հայ հասարակութեան քաղաքական բոլոր հոսանքների շրջանում։ («Отечество»)

ԴԱՐԴԱՆԷԼ 108 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Պատմութիւնը կը կրկնուի դարու մը ժամանակամիջոցին մէջ։ Ճիշդ 108 տարի կայ, որ անգլիական նաւատորմ մը Դարդանէլը ճեղքած անցած է և խարիսխ նետած Կ. Պոլսոյ առջև։

1807 Թուականին, գարնան մէջ Նապոլէոնի տիրապետող անունը ամբողջ Եւրոպայի մէջ ակնածանքով կարտասանուէր։ Անիկա նուաստացուցած էր Պրուսիան և ջլատած էր Մեծն-Բրիտանիոյ արտաքին վաճառականութիւնը։ Նապոլէոն Բոնապարտի ստիպումին վրայ էր որ Թիւրքիա Դարդանէլը կը փակէր ռուսական դրօշ կրող ամեն նաւերուն առջև, որովհետև այնատեն Ռուսիա միակ դաշնակիցն էր Անգլիոյ։

Ալէքսանդր ցարը՝ սրտնեղած՝ խնդրեց անգլիական կառավարութենէն, որ շուտով բաւական մեծ նաւային ուժ մը ղրկէ Կ. Պոլիս, որպէսզի կարենայ իր իրաւունքները պարտադրել տալ սուլթանին։

Լոնդրայէն եկած հրահանգի մը համաձայն, Միջերկրականի նաւատորմին հրամանատար լորդ Կոլինգվուդը պաշտօն կը յանձնէր սըր Ջոն Դուքվորթի, որ իր նաւաբաժինով անցնի Դարդանէլէն։ Այս նաւաբաժինը ունէր հօթը առաջին գծի նաւեր, բազմաթիւ թնդանօթակիրներ և թորպիլանաւեր։ Այս նաւաբաժնին չէր ընկերացած արշաւաբանակ մը, ինչպէս հիմա։

Փետրուար 15-ին սըր Ջոն Դուքվորթ Թէնէդոսէն խարիսխ կը քաշէր ու կը մտնէր Դարդանէլ ծովակալի նաւուն մէջ առնելով Արբութնօթ՝ Պոլսոյ անգլիական դեսպանը և ուրիշ անգլիացի փախստականներ։ Չորս օր յետոյ նաւաբաժինը Սէսթօսի և Աբիդոսի առջևէն կանցնէր, առանց կարևորութիւն ընծայելու նեղուցէն արձակուած դժոխային թնդանօթաձգութեան։ Դեր-ծովակալ սըր Սիդնէյ Սմիթ, Անկրի հերոսը, կընկղմէ թիւրքական փոքրիկ նաւատորմը, որ ներքին ամրոցներու պաշտպանութեան տակ՝ փորձած էր նեղուցը գոցել թշնամի նաւերուն դէմ։

Փետրուար 20-ին անգլիական նաւաբաժինը, առանց ոևէ վնասի, կը մտնէ Մարմարայի ծովը և կերթայ խարիսխ նետել Պրինքիպօ կղզիին առջև, Պոլսէն մօտաւորապէս ութ կիլօմետր հեռու։ Ալեկոծութիւնը և կատաղի քամին արգելք կըլլան աւելի առաջ երթալու։

Եթէ Մեծն Նէլսըն եղած ըլլար արշաւանքին հրամանատարը, պիտի կրկնէր անշուշտ իր հռչակաւոր «բլէֆը», որ 1801 Թուին Քօպէնհագի առջև այնքան սքանչելիօրէն յաջողեցաւ։ Անիկա պիտի շարէր իր նաւերը Սարայ-Պուրնուի առջև և քաղաքը ռմբակոծելու սպառնալիքին տակ՝ պիտի յաջողէր խաղաղութեան լաւագոյն պայմաններ առնել Թիւրք կառավարութենէն։ Սակայն Դուքվորթ Նէլսըն մը չէր։ Ժամանակը վատնեց ապարդիւն բանակցութիւններով Թիւրքերուն հետ։ Մինչդեռ այն միջոցին Բ. Դուռը ֆրանսացի երկրաչափներու ուղղութեան տակ կը զօրացնէր պաշտպանողական կէտերը 500 թնդանօթներով և 400 հրասանդներով, ինչպէս նաև լաւ զինուած 100,000 հոգինոց բանակով մը։

Անգլիացի ծովակալը ժամանակ մը ևս ժամավաճառ ըլլալէն յետոյ՝ ունկնդրութիւն կը խնդրէ սուլթան Սէլիմ Գ.-էն, բայց կը մերժուի ու, առանց Պոլիսը ռմբակոծել համարձակելու, կը պատրաստուի իր նաւերով Դարդանէլ վերադառնալու։ Մեկնումը տեղի կունենայ 1807 մարտ 1-ին։ Դարդանէլի մէջ գրեթէ բոլոր նաւերը կը վնասուին Թիւրք թնդանօթներէն, և մեծ դժուարութեամբ կը յաջողի նեղուցէն անցնիլ՝ վրայ տալով 281 նաւազներ։ («Արաքս»)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—о—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կարպատներում մեր զօրքերը լոյս ապրիլի գիշերը անաղմուկ մօտեցան թշնամու խումբերին Տելեպօչ և Զուէլա գիւղերի միջև, անակնկալ գրոհ տուին և կարճատև սուինային կռուից յետոյ տիրացան երկու դիրքի, գերելով մեծ թւով թշնամի։ Թշնամին ուղարկեց իր պահեստի գնդերը հակայարձակում գործելու համար։ Կռիւը շարունակվում է։

Ռոստոկի ուղղութեամբ թշնամին Օրօշ-Պատակ գիւղի կողմից ապարդիւն յարձակումներ գործեց մեր գրաւած դիրքերի վրայ։

Ստրիյի ուղղութեամբ ապրիլի 1-ին մենք աջողութեամբ վանեցինք թշնամու շարունակվող յարձակումները։

Կարպատների զօրաճակատի զանազան տեղերից ստացվում են տեղեկութիւններ գետերի խիստ վարարման մասին։

Բուկովինա են եկել բազմաթիւ օժանդակ գնդեր գերմանական և աւստրիական զօրամասերից։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 ապրիլի

ՓԱՐԻԶ.— Էլզասում, Լօկի հիւսիսային մասում մենք առաջացանք 1500 մետր։

Պաշտօնապէս հաղորդվում է. Արրասի հիւսիսային մասում մենք փայլուն յաղթութիւն տարանք, որ լրացրեց վերջին ամսում ունեցած մեր յաղթութիւնները։ Մեր զօրքերը սուինային յարձակումով վերցրին Նոտր-Դամ-դէ-Լօրէտը։ Այդպիսով մենք ներկայումս գրաւում ենք այդ բարձրաւանդակի ամբողջ հարաւ-արևելեան լանջերը մինչև Օբլենսէնեադէր, գերելով 150 մարդ ու ձեռք ձգելով 2 գնդացիր։

Տէպվալի և Լաբուասէլի մօտ, Ալբէրի շրջանում, թշնամին կրկնակի փորձեց յարձակումներ գործել, բայց մեր զօրքերն իսկոյն կանգնեցրին։

Արգօնեան բարձրաւանդակի վրայ Բօզէնտալի մօտ մեր թնդանօթաձիգ վաշտերը կործանեցին գերմանացիների գլխաւոր խրամատը։

Ապա Նէֆրօսինից դէպի արևելք մենք վանեցինք թշնամու յարձակումը։

Էպարժի մօտ թշնամին գիշերով երեք անգամ յարձակման դիմեց դիրքի արևելեան կողմը խլելու նպատակով, բայց վանվեց խոշոր կորուստներով։

Մօրմարի անտառում մենք վանեցինք թշնամու հակայարձակումը։ Մենք ձեռք ձգեցինք 2 թնդանօթ, 2 ռմբաձիգ, մի գնդակացիր, մի քանի հարիւր հրացան և մի քանի հազար փամփուշտ և ռումբ։

Լեպրէտրի անտառում մենք վանեցինք յարձակում և ձեռք ձգեցինք գերիներ։

Գերմանական մի աէրօպլան ռումբեր նետեց Մուրմելօնի հիւանդանոցի վրայ։ Մեր աէրօպլաններից մէկը 5 ռումբ նետեց Մեզէր-Շարլվիլում գերմանական գլխաւոր բանակի վրայ։ Բոլոր ռումբերն ընկան այն շինութեան վրայ, որի մէջ գտնվում է կայսրի սպայակոյտը։ Այնուհետև մենք ռմբակոծեցինք Ֆրէյբուրգի կայարանը։ Վերջապէս 15 աէրօպլան աջողութեամբ ռումբեր նետեցին Օստենդէի գերմանական զինուորական շինութիւնների վրայ։ Մեր աէրօպլանները ենթարկվեցին թշնամու ուժեղ կրակին, բայց անվնաս վերադարձան։

ԼՈՆԴՈՆ.— Երէկ առաւօտեան երկու «Ցէպպելին» երևացին Մալդօնի վրայ Էսսէքսում և նետեցին 4 ռումբ, որոնք վնաս չը պատճառեցին. յետոյ նրանք ռումբեր նետեցին Հայբրիջում, ուր հրդեհ ծագեց մի քանի տներում։ Դրանից յետոյ «Ցէպպելինները» պտոյտներ գործեցին և դիմեցին Բլէկվօտէր գետի հոսանքով։

Կէսօրվայ ժամը 1-ին ծովի կողմից երևաց մի «Ցէպպելին», որ Լաուստաֆտի շրջակայքում նետեց 3—4 ռումբ։ Սպանվեցին 3 ձի և թեթև վիրաւորվեց մի կին։ Առաջ քան դէպի ծովը մեկնելը, «Ցէպպելինը» 6 ռումբ նետեց Սոուտոլդում։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 ապրիլի

ԼՈՆԴՈՆ.—Լրագիրների ասելով, անգլիական «Պատրիդէն» շոգենաւը ջրասուզվել է ականից Նորդհինդէրի մօտ։ 22 նաւաստիներից ազատվել են 11 հոգի։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 ապրիլի

ԼՈՆԴՈՆ.— Համայնքների պալատ։ Պալատին զեկուցվեց, որ մինչև մարտի 30-ը բրիտանական զօրքի ընդհանուր կորուստները կազմում էին 139,347 մարդ։

Ասկվիտը յայտնեց, որ հաստատված է մասնաժողով ռազմամթերքներ պատրաստող ոյժերը նպատակայարմար գործադրելու համար։ Մասնաժողովի անդամներն են Լլօյդ Ջօրջ, Բալֆուր և բանւորական կուսակցութեան պարագլուխ Արտուր Գենդերսոն։

Հաղորդում են, որ համայնքների պալատի անդամ, Գլադստոնի թոռը սպանվել է կռւում։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.— Ֆինլանդական քաղաքների միութիւնը փոխադրեց 10,000 ռ. համառուսական քաղաքների միութեանը վիրաւորներին օգնելու։

ՀՌՈՄ.— Երէկ Սալանդրան բաւական երկար խորհրդակցութիւն ունեցաւ արտաքին գործերի, զինւորական, ծովային մինիստրի և գլխաւոր շտաբի հետ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Ֆրանսիական դեսպանատանը կայացաւ նախաճաշ ի պատիւ բէլգիական արտակարգ պատուիրակութեան, որին ներկայ էր արտաքին գործերի մինիստրի օգնական Նէրատովը։

ՍՏՕԿՀՕԼՄ.— «Ֆորվէրտսը» տեղեկացնում է իր ընթերցողներին, որ արտակարգ հանգամանքների պատճառով մայիսի 1-ին աշխատանքները Գերմանիայում չեն դադարեցվի։ Լոյս կը տեսնեն նաև սօցիալիստական լրագիրները։ Մայիսեան առանձին տուրքը չի գանձվի և լրագիրների առանձին մայիսեան համարները լոյս չեն տեսնի։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—(Պաշտօնական)։ Կովկասեան հանքային ջրերում վարակիչ հիւանդութիւնների դէպքեր չեն եղել։ Նախագահ սանիտարական գործադիր մասնաժողովի Տիլիչէվ։

ԿԻԵՎ.—Դնէպրի վարարումը շարունակվում է։ Ջրի տակ մնացել են 200 տուն։ Բնակիչները իրար հետ կապ են պահպանում նաւակներով։ Դնէպրի վրայ փոթորիկ է. վնասվել են շատ մանր նաւեր։

ԳՈՄԵԼ.—Սօժի գետի ջուրը շարունակում է աւելանալ։ Քանդվել են շատ տներ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

✦ Յունաստանում տիրում է լուրջ կացութիւն։ Սպասվում են վճռական գործողութիւններ նրա կողմից։ Սօֆիայից շտապով Աթէնք է կանչվել յունաց դեսպանը։

✦ Բուլղարիային աջողվել է պատուիրել 300 հազար հրացան Իտալիայում։ Բուլղարիան երաշխաւորել է, որ հրացանները չեն ուղարկվի ոչ Աւստրիա, ոչ էլ Գերմանիա։

✦ Ֆրանսիան բանել է 200 միլիոն ֆրանկի յունական փոխառութիւնը, մինչև Յունաստանը չը միանայ երրեակ համաձայնութեանը։

✦ Վարշավայից տեղեկացնում են, որ եղբայրական գերեզմանատունը Լիւբլինի նահանգը փոխադրելիս նրանում գտնվեցին 1914 աւստրիական հրացան, 13 ռուսական հրացան, 5000 փամփուշտ և 60 բահ։

✦ Շվէյցարիայի և Դանիայի ուսումնարանների բարձր դասարաններում աւանդվում է ռուսերէն. արդիւնաբերող շրջանները եռանդով ուսումնասիրում են մեր լեզուն։

✦ Պետրօգրադում սկսվել է խորհրդակցութիւն Նիկոլայէնկոյի նախագահութեամբ՝ նաւթային մենավաճառութիւն հաստատելու և արքունի լուցկու գործարան բանալու հարցերը քննելու համար։

✦ 91-րդ ունգարական գունդը ապստամբվել է և բնաջինջ է եղել։

✦ Շվէդական լրագիրները հաղորդում են, որ ֆրանսիացի երկու օդագնաց ռումբեր են նետել Համբուրգում և փչացրել են գործարանները։

✦ Բուդապեշտում փակել են սլաւոնական և ռումինական թերթերը։

✦ Լէնինգում գերմանացիք բռնաբարում են կանանց և հրացանի են բռնում երեխաներին։

✦ Կրակով մտնել մասնաւոր անձանց արգելվում է։

✦ Սերբիայի և Իտալիայի միջև համաձայնութիւն է կայացել Ադրիատիկի հարցի առիթով։ Իտալիայի հանդէս գալը անխուսափելի է։

ԳԵՐՄԱՆԻԱ ՈՐՔԱՆ ՊԱՀԵՍՏԻ ՈՒՆԻ

«Le Journal»-ի մէջ Rosny Aisne յօդուած մը կուտայ Գերմանիոյ պահեստի զօրքի թիւին մասին։

Յօդուածագիրը կըսէ, թէ բազմաթիւ մասնագէտները փորձեցին պատերազմի սկիզբէն ի վեր ցոյց տալ Գերմանիայի զինելի մարդկանց թիւը։ Անոնցմէ մէկն իբրև հիմ կառնէր բալկանեան պետութիւններու զօրահաւաքումէն առնուած համարատուիչ մը (գօէֆիցիէնտ), որ եղած էր մինչև այն ատեն չտեսնուած համեմատութեամբ՝ 8°/o ամբողջ ազգաբնակութեան վրայ. այս տուեա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ «ՄՇԱԿԻՆ»

Թող որքան կուզեն՝ չարամիտ մարդիկ
Ամբաստանեն քեզ, ով հայոց «Մշակ»,
Թող որքան կուզեն՝ տքնեն, աշխատեն,
Քո մասին սուտեր խօսեն սանձարձակ,

Թող որքան կուզեն՝ կեղծ դիմակի տակ
Իբրև ազգասէր, իբրև բարեբար
«Հայ ժողովրդին լոյս պէտք է,—գոչեն,—
Թող վերնայ մեզնից այն մթին խաւար»,

Թող որքան կուզեն չար հնարներով
Սուրբ գործի հանդէպ դնեն արգելքներ,
Եւ գիշեր ցերեկ աշխատեն անխոնջ
Իրանց չար կամքը միշտ առաջ տանել,

Թող որքան կուզեն՝ որքան կը ցանկան,
Ամբոխին խաբեն անվերջ կեղծելով,
Թող որքան կուզեն՝ գոռան, գոռգոռան՝
«Պարտք» և «իրաւունք» միշտ պահանջելով,

Դու մի՛ վհատիր, ով հայոց «Մշակ»,
Գործիր յարաժամ, սուրբ է նըպատակդ,
Ու կը գայ մի օր, մի օր պատմական,
Եւ դրանք ամօթի սարսափը կը զգան։

Կարս Յակոբ Թանգար

ԸՆԿԱԾՆԵՐԻՆ

Յարգանք ձեզ, ընկած սուրբ մարտիրոսներ,
Դուք մեռաք ազատ որպէս հերոսներ,
Կարմիր բորենուն ուզեցիք սանձել,
Մեռնող երկրին նոր կեանք ներշնչել։
Բայց դեռ կանգուն է Թիւրքի այդ բահաղ,
Լափում է անյագ հայ կեանքեր մատաղ։
Դեռ բարձրանում են սև կախաղաններ,
Դեռ շառաչում են մաշող շղթաներ.
Որպէս գերեզման՝ բացած բերաններ,
Զոհ են սպասում դաժան, մութ բանտեր։
Եւ դեռ արշալոյս ծագում է երկչոտ՝
Հարազատների արիւնի միջից,
Դեռ բիւր զոհերի մռմուռը ցաւոտ
Վրէժ է գոչում տանջարաններից։
Արիւնի հետքեր, արիւնոտ ձեռքեր
Կազմում են զարդը Թիւրք պալատների,
Նոր ձայն, նոր շշուկ խեղդում են, զսպում
Թիւրք նշանազարդ դահիճներն արի։
Յօշոտված դիեր, ջախջախված գանգեր—
Միակ միջոցը ապահովութեան,
Եաթաղան, գնդակ—միակ ապաւէն
Արիւնոտ գահի գազան բռնութեան։
Փոյթ չէ, ընկածներ, չենք լալ երբէք.
Կը զոհենք մեր կեանք ձեզ պէս անխնայ։
Ամբոխը զարթեց, մեծ համրը խօսեց,
Մահ և սարսափից էլ չենք վախենայ։

Աստրախան Գ. Ք. Մկրտումեան

ՁՄՐԱՆ ԵՐԿԱՐ ԵՐԵԿՈՆԵՐԻՆ...

(Էտիւդ)

Ձմրան երկար երեկոներին, երբ ողջ գիւղը արդէն մրափած է լինում ու գիտես որ ոչ ոք չի գալու հետդ զրուցելու, երբ ձանձրոյթից կարդում ես՝ գուցէ արդէն տասներորդ անգամ միևնոյն նամակը, ահա այդ տաղտկալի երեկոներին նորից դիմում եմ նրան՝ դպրոցի մշտապէս լուռ ծառային միևնոյն խնդիրքով.

— Դէ գոնէ մի բան պատմիր...

Իսկ նա—որ նստած է սենեակիս անկիւնում ճիշդ այնպէս, ինչպէս որ նստած էր այն առաջին երեկոյեան, երբ ես գիւղ եկայ ուսուցչի պաշտօնով—լուռ է և իր տարօրինակ վառվռուն աչքերով նայում է հեռուն...

Իմ աղաչական խնդիրքս մնում է անպատասխան։

— Դու էլ մի բան պատմիր,—սկսում եմ նրան հարցնել ու երկրորդ անգամ։

Բայց նա լուռ նստած է և որպէս պատասխան իմ խնդիրքին երբեմն միայն իր տխուր հայեացքը յառում է վրաս, սրտաճմլիկ կերպով թառանչ քաշում և նորից կենտրոնանում իր մէջ՝ դիտելով միշտ հեռուն, կարծես մոռանալով իմ ներկայութիւնը...

Սակայն ձմրան այդ տխուր երեկոները անչափ վատ են ազդում վրաս։

Մենակ եմ, բոլորովին մենակ։

Ցերեկով—գիւղի երեխաների հետ դաս պարապելուց յետոյ—սովորական զբօսանքս եմ կատարում միևնոյն արահետներով։

Այդ զբօսանքներիս միջոցին գիւղացիք մօտենում են ու հետս զրոյցի բռնվում և նոյնիսկ յաճախ գալիս բնակարանս՝ իրանց առօրեայ նիստուկացի վերաբերմամբ խորհրդակցելու հետս։

Սակայն նրանց այդ զրոյցները, որոնք պտտվում են միմիայն իրանց ծանր ճակատագրի շուրջը, կրկնապատիկ աւելի զգալի են դարձնում մենակութիւնս, և ես պարզ գիտակցում եմ, որ իմ խորհուրդներով ու լոկ բարի ցանկութիւններով քիչ օգուտ եմ բերում կարիքի տակ ճնշված խեղճ գիւղացոց...

Ու հասարակ ձմեռը շատ շուտ է մթնում մանաւանդ գիւղերում։

Ժամանակը մի կերպ սպանելու համար՝ սկսում եմ գալիք օրվայ կատարելիք աշխատանքս աչքի անցնել։

Սակայն այդ աշխատանքս շատ ժամանակ չի խլում ինձանից։

Այնուհետև սկսում եմ նորից կարդալ ստացածս նամակները, որոնք երկու և աւելի շաբաթվայ ճամբորդութիւն են լինում կատարած մինչև ինձ հասնելը։

Նորից աչքի եմ անցնում կարդացածս լրագիրները և ապա թէ միայն սկսում որևէ գիրք կարդալ։

Նայում եմ ժամացոյցին։

Դեռ ութ ժամն է, իսկ շուրջս գերեզմանային ճնշող լռութիւն է տիրում։

Քնած է ամբողջ գիւղը։ Նոյնիսկ շներն էլ են ձայները կտրել։

Երբեմն-երբեմն միայն քամին է ոռնում՝ իր թախծալի երգով խանգարելով գիւղի անդորրութիւնը, էլ աւելի տխրութիւն բերում վրաս ու մենակութիւնս էլ աւելի զգալի դարձնում։

Իսկ նա՝ դպրոցի ծառան լուռ նստած անկիւնում ու ըստ առաջնոյն մտածում է մի ինչ-որ բանի մասին...

Նրա մռայլ ու մաշված դէմքը, թախծոտ լի տխուր աչքերը ինչ-որ բան են որոնում։

Նրա այդ թախծալի աչքերը, որ ամբողջ ժամանակ յառած են լինում հեռուն, երբեք ինձ չեն նայում...

Իսկ ես՝ այդ հոգեմաշ երկար երեկոներին նորից նրան եմ դիմում իմ միօրինակ խնդիրքով.

— Դէ մի բան պատմիր...

Բայց նա շարունակ լուռ է մնում...

Եւ այդ անհարկու անդորրութեան մէջ անհասկանալի երկիւղ է պատում ինձ...

Սկսում եմ վախենալ իմ լուռ ծառայից։

—

Արդէն ուշ գիշեր է։

Անհամբեր սպասածս նամակը լաւ լուր չի բերել ինձ համար։

Գլուխս լի է ծանր մտքերով։

Անհանգստութիւնը տիրում է ինձ։

Դուրսը դեկտեմբերի ցրտաշունչ հողմը աղմկում է մոլեգնաբար։ Երկիւղալի է տանից դուրս գալը, իսկ քունն էլ փախել է աչքերիցս։

Եւ այսպիսի տաժանելի գիշերը վրաս երկիւղ ազդող ծառան է միայն ինձ հետ...

Հայեացքս կենտրոնանում է նրա վրայ։

Պարզ տեսնում եմ, որ նա մի ինչ-որ բանի մասին է մտածում, մի բան է մտաբերում, որից մի դառը ժպիտ սահելով անցաւ նրա դէմքի վրայից, իսկ աչքերը կատաղաբար կայծեր արձակեցին, ապա մի խորը հոգոց քաշեց, որից մի անսահման տխրութիւն պատեց նրա դէմքին...

Սակայն ես, լինելով տխուր լուր բերող նամակի ճնշող ազդեցութեան տակ ու վրդովված, նորից դիմում եմ նրան, բայց այս անգամ աւելի հրամայական ձայնով.

— Դէ, վերջապէս, մի բան էլ է պատմի՛ր, ասում եմ քեզ։

Իմ ձայնից նա ցնցվում է։

Իսկ ես մօտենալով նրան՝ դրդում եմ ուսը և կրկնում.

— Պատմի՛ր, պատմի՛ր, ասում եմ քեզ։

Նա տեղից ցատկեց վեր, հպարտօրէն ուղղվեց և՝ վրաս մի գրգռիչ հայեացք գցելով՝ բացագանչեց.

— Ի՞նչ, ի՞նչ ես ուզում, որ պատմեմ։

Նա ասելով կանգ առաւ, բայց անմիջապէս շարունակեց խօսքը.

— Մենք ութ հոգի էինք՝ հայրս, մայրս, կինս և երեխաներս... Ապրում էինք երջանիկ միևնոյն յարկի տակ։ Այդ երջանկութիւնը ձեռք էինք բերել մեր հալալ աշխատանքով՝ հերկելով մեր հողերը... Մի գիշեր յարձակվեցին մեզ վրայ, թալանեցին մեր տունը և ապա հրդեհեցին...

Նա էլի մի րոպէ լռեց, խորը հառաչեց և ապա շարունակեց։

— Հիմա ես մենակ եմ, մենակ... իսկ այնտեղ, ուր իմ երջանկութիւնն էր, ուր մեր հայրական օջախն էր, այնտեղ՝ հրդեհված տան փլատակների տակ, թողել եմ հօթը թանգագին դիակ... Եւ հիմա...

Դժբաղդ ծերունու ձայնը դողաց ու սաստիկ յուզված՝ վրաս նորից մի կատաղի հայեացք գցելով, խիստ ձայնով ճչաց.

— Դէհ, էլի ի՞նչ ես ուզում, որ պատմեմ...

Սարսափը պատեց ինձ։

Ինձ այնպէս թւաց, թէ նրան՝ այն կենդան մարդուն ողջ-ողջ փակեցի այն սոսկալի գերեզմանի մէջ, ուր հանգստանում էին նրա սիրելիները՝ ծնողները, կինը, սիրասուն զաւակները...

Մի երկիւղալի հայեացք գցելով նրա վրայ, յետոյ ընկրկեցի։

Սարսափելի էին նրա կատաղի աչքերը...

—

...Եւ ձմրան երկար երեկոներին՝ երբ հարիւր ու մի երորդ անգամ կարդում եմ միևնոյն բանը, երբ գերեզմանային լռութիւնը ճնշում է միտքս, երբ անպարփակելի սառը մառախուղը շրջապատում է ինձ, այդպիսի երեկոներին թեթևամիտ խնդիրքովս այլ ես չեմ դիմում նրան՝ մի բան պատմելու...

Այդ ծանր, կապարի պէս ճնշող երկար երեկոներին մտաբերելով նրա մորմոքով լի պատմութիւնը, մտքերս տանում են ինձ շատ հեռու, այնտեղ՝ ուր ծածկված է անմեղ զոհերի թարմ արիւնով այն երկիրը, ուր վայրագ բռնութիւնն է տիրապետողը, ուր դարեր շարունակ տուայտում, հալումաշ է լինում մի ազնիւ ժողովուրդ...

Ձմրան երկար երեկոներին...

Գրի-Կօ

լով Գերմանիա յաջորդական զօրահանութեամբ պիտի կարողանար 5.500,000 անհատ զէնքի տակ ունենալ. բայց նա անկից աւելի ունեցաւ:

Repington գնդապետը այն կարծիքն ունի, թէ Գերմանիա դեռ կրնայ 4.000,000 մարդ պահեստի ունենալ. իր յօդուածը մեծ աղմուկ առաջ բերաւ... Այդ թիւէն պէտք է եզրակացնել, որ Գերմանիա՝ բալկանեան պետութիւններու անմասնակցութեամբ զօրահանումին համեմատական թիւէն դեռ 50% աւելի կարող է ընել: «Dépêche de Toulouse»-ի մէջ մասնագէտ մը կը քննադատէ այդ թիւերը, բայց դժբաղդաբար նա ալ միայն 22—38 տարեկաններուն թուահամարը կուտայ և կեզրակացնէ, որ նոյեմբեր 1-ին Գերմանիա ունէր 3.600,000 իսկական զինուած անհատ... Դա ալ շատ լաւատեսութիւն է...

Բարեխղճօրէն կազմուած ուսումնասիրութեան մը մէջ M. de B. քննութեան կառնէ Repington-ի թիւերը և կը կարծէ, որ Գերմանիա բացի 1915-ի զօրակոչէն բնաւ պահեստի չունի. «Վիճակագրութիւնները,—կըսէ M. de B.,—կը հաստատեն, որ ոեւէ երկրի մը որոշ տարիքի մէջ (օրինակ 20 տարեկան) երիտասարդներուն գումարը կը ստացուի այդ երիտասարդներուն ծննդեան թուականին գոյութիւն ունեցած ընդհանուր ազգաբնակչութեան թիւը բազմապատկելով 0,008-ի շատ մօտիկ համարատրիչով», ուրկէ կը հետևցնէ M. de B., թէ Գերմանիա պէտք է ունենայ 9.596,000 զօրագրուելիներէն 7.677,000 ծառայութեան յարմար: Մահուան և ուրիշ դէպքերու պատճառով այդ թիւը կիջեցնէ 6.404,000...

Այսպիսով M. de B. կը կարծէ, թէ Գերմանիա ներկայ պատերազմին համար տրամադրած է այդ թիւը, որոնցմէ 2.000,000 դեռ դուրս կը մնան պատերազմի դաշտէն. 1.500,000 արևելեան ճակատին վրայ է. 1.800,000 արևմտեան ճակատի վրայ, 700,000 կայսրութեան պաշտպանութեան համար: Վերջապէս նա պէտք է ունենայ 404,000 պահեստի, որ առաւելապէս 1915-ին կազմուած է և որ դեռ ամբողջապէս զէնքի տակ չէ:

Այս թիւերն ալ ճիշդ չի գտներ Rosny Aisne, ըսելով որ 0,008 համարտադրիչը միօրինակ կերպով կարելի չէ ընդունիլ. ազգի մը համար, որուն ծնունդը մահացութենէն շատ է, ինչպէս է Գերմանիան, 0,008 համարտադրիչը քիչ է, այլ պէտք է լինի նա առնուազն 0,0083—0,0084. միայն այս կէտը նկատի առնելով կը հետևցնէ, որ պահեստինները պէտք է լինեն 1.800,000:

Այս գումարը ան մօտ կը գտնէ իր մէկ ուրիշ հաշիւին՝ կատարուած Գերմանիոյ ծնունդներու վրայ, որմէ 10.000,000 զինուորցուներէն օգտագործելի կը համարէ 6.600,000—7.000,000: Հաշուելով 1.500,000 կորուստ (պատերազմի սկիզբէն ի վեր), 700 հազար կայսրութեան պաշտպանութեան յատկացուած, 1.300,000 արևելեան ճակատի, 1.800,000—1 200,000 արևմտեան ճակատի վրայ է. գումար 5.300,000: Պահեստի զօրքը կըլլայ 1.400,000—1.700,000, աւելցնելով այդ գումարին վրայ պատահական զինուորագրեալներ (կամաւորներ և այլն), ինչպէս նա 45-էն վեր զօրահանուածները, այդ գումարը կը հասցնէ 1.900,000-ի: Թ. Գ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ուղղում.—«Մշակի» № 66-ի մէջ սխալմամբ երկրորդ անգամ է տպված «Кавк. Сл.» թերթի գրասենեակից ստացված 100 ր., որի մասին առաջին անգամ տպված է № 60 ի մէջ, ուստի ընդհանուր գումարը պէտք է լինի ոչ թէ 27,057 ր. 30 կ., այլ 26,957 ր. 30 կ.:

Ապա ստացել ենք՝ 1) Սէրովօ կայարանից (Կօկանդ), եղբ. Յակոբեանների միջոցով, հանգանակված տեղում (ցուցակը կը տպվի)—53 ր., 2) Նովօրոսսիյսկից, Մ. Բարսամեանից 5 ր., 3) Վլադիկավկազից, Կապօչկա Իւզբաշեանից 3 ր. 50 կ., 4) Պետրօգրադից, ամուսիններ Միքայէլ և Մագդալինէ Ալլահվերդեաններից 25 ր., 5) Թիֆլիսում, Արշ. Ղնդղազաղեանից, մարտի 27-ին Ալ. Ռոստոմեանի մօտ ճաշին հաւաքվածների շրջանում, հանգանակված, յանձնելի Նպաստ. Ընկ.՝ 32 ր., 6) Թիֆլիսում, Առևտրական Բանկի ծառայողներից, հանգուցեալ Յովհաննէս Քր. Լալայեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, յանձնելի Նպաստ. Ընկերութեան՝ 45 ր., 7) Թիֆլիսում, Զարդեղեան աւ.-քահանայից, յանձնելի Նպաստ. Ընկ.՝ 10 ր., 8) Կարսի շրջանի Ղարաղալա գիւղից, Մարտիրոս Ապահեանի միջոցով, հանգանակված Հաջի-Խալիլ Թիւրքմէն գիւղի հասարակութեան շրջանում՝ 170 ր., 9) Ղալիից, Ս. Յակոբեանի միջոցով, հաւաքված մի ընտանիքում՝ 10 ր., 10) Կարսից, Գրիգոր Բաբասեանից, յանձնելի Նպաստ. Ընկ.՝ 10 ր., 11) Թախտաբազարից, Ա. Խաչատրեանից, տեղական գաղութում հանգանակված (ցուցակը կը տպվի) 126 ր. 10 կ., 12) Թիֆլիսում, տ. Հռիփսիմէ Դաւթեանից, հանգանակված Յակոբ Պօյաճեանի՝ հրաւէրքի ժամանակ, յանձնելի Նպաստ. Ընկեր.՝ 13 ր. 10 կ.: Գումարն է 502 ր. 70 կ.: Նախկին ստացված 26,957 ր. 30 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 66) ստացել ենք 27,460 րուբլի:

Ծանօթ.—«Մշակի» № 60-ի մէջ տպված Մկրտիչ Սարգսեանի 25 րուբլու մասին սպրդել է մի սխալ տեղի մասին. պէտք է լինի Սումլից և ոչ Սուխումից, ինչպէս տպված է:

ՑՈՒՑԱԿ

Գանձակի Կորիւնապաս գիւղի նուիրատուների
(Յօգուտ հայ գաղթականների)
(Տես «Մշակ» № 25)

Ս. և տ. Առստամեան 3 ր. 50 կոպ., Հ. Առստամեան, Ս. և Լ. Թորոսեաններ և Ս. Առստամեան՝ 2-ական ր., Ս. Առստամեանի որդիներ՝ Թէոդորոս, Սաշիկ և Անահիտ՝ 1 ր. 50 կ., Ս. Յակոբեան, Ս. Մարգարեան, Ա. Մարգարեան, Բ. և Ռ. Բուդաղեաններ, Ս. և Գ. Մարկոսեաններ, Ի. Մելքոնեան 1-ական ր., Մ. Առստամեան, Բ. Զաքարեան, Մ. Բոնծօեան, Շ. Թորոսեան, Ա. Գրիգորեան, Մ. Յովսէփեան 50-ական կ.: Գումար 20 ր.:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԹԱՆԳՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ամսիս 3-ին, ուրբաթ, երեկոյեան ժամը 8½-ին, քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանի նախագահութեամբ, դումայի նիստերի դահլիճում տեղի ունեցաւ երկրորդ խորհրդակցութիւնը թանգութեան դէմ միջոցներ մշակելու մասին:

Մասնակցում էին հարիւրից աւելի հրաւիրվածներ՝ քաղաքային իրաւասուներ, տեղական հաստատութիւնների, կազմակերպութիւնների, առևտրականութեան և մամուլի ներկայացուցիչներն ու ոստիկանապետը:

Նիստը բացված յայտարարելով, նախագահը ծանօթացրեց ժողովականներին նախորդ խորհրդակցութեան մէջ շօշափված խնդիրների ու առաջարկների հետ և տուեց վարչ. անդամ Մ. Ա. Զաքարի զեկուցման եզրակացութիւնները: Վերջում աւելացրեց, որ այսօրվայ խորհրդակցութիւնը կարող է ցուցմունքներ տալ, թէ՝ վագոնների անկանոնութիւնից զատ՝ ուրիշ ի՞նչ պատճառներ կան, որոնք խոչընդոտ են լինում մթերքներ բերելուն:

Վարչ. անդամ Մ. Ա. Զաքար համառօտ կերպով զեկուցեց, որ Թիֆլիսն էլ այսօր գտնվում է նոյն պայմաններում, ինչ պայմաններում են միւս խոշոր քաղաքները. տարբերութիւնը միայն ֆինանսականի մէջն է կայանում: Թիֆլիսի ֆինանսական վիճակը թոյլ չէ տալիս խոշոր ձեռնարկութեան դիմել: Վարչութիւնը լայն մունիցիպալիզացիա մտցնելու ռիսկ չէ անում, որովհետև դրա համար հարկաւոր են ոչ միայն միջոցներ, այլ և ապրանք: Տուեալների վրա հիմնվելով, նա նկատում է, որ այսօր մեր շուկան գտնվում է մի քանի անձանց ձեռքում ու նրանք էլ թելադրում են գները թանգացնելով: Արհեստական թանգութեան դէմ պայքարելու համար անհրաժեշտ էր նախ՝ ապրանքների պաշարը աւելացնել ու ստեղծել մրցութիւն, այլապէս սակագներն իրանց նշանակութիւնը կորցնում են: Երկրորդ՝ մօտեցնել սպառողին արտադրողին:

Ամենից աւելի իրական միջոցն այն է, որ քաղաքը իր ձեռնարկութեամբ հանդէս գայ առաջին անհրաժեշտութեան մթերքները գոնէ էժանացնելու համար:

Վարչութիւնը, քննելով այդ հարցը, ամենայարմար ձևը համարել է. 1) այն, որ քաղաքը ունենայ սեփական շտեմարաններ՝ վաճառելու մթերքները, 2) նպաստէ կոօպերատիվ ու սպառողական ընկերութիւններին:

Այդպիսով եթէ չաջողվի էժանացնել, գոնէ կարելի է կանգնեցնել գների բարձրանալու տենդենցը:

Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է 1) գտնել նիւթական միջոցներ դրսից, կամ ստանալ օժանդակութիւն գանձարանից առանց տոկոսի, 2) կանոնաւորել անհրաժեշտ մթերքների մատակարարութեան գործը, ստեղծելով մի մատակարարողական մարմին, նոյնանման սանիտարական մարմնի:

Շօշափված խնդիրների շուրջը տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, որին մասնակցեցին 22 հոգի—Ա. Բարով, բժ. Մ. Վէսէլովզորով, Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկ, Մ. Բերբերեան, Խունդաձէ, Մաչաբէլի, Ն. Էլիավա, Տէր-Զաքարեան, Կէյլ, Ղարիբջանեան, ոստիկանապետը, Շիրինեան, Սէյլանեան և ուրիշները:

Ամենքն էլ շեշտում էին վագոններ տալու գործը կանոնաւորելու անհրաժեշտութիւնը և ցանկութիւն յայտնում, որպէս զի վարչութիւնը միջնորդութիւն զարթեցնէ այդ գործն իր ձեռքում կենտրոնացնելու:

Առևտրականութեան հոսանքի արտայայտիչները թանգութեան դրդապատճառը համարում էին այդ հանգամանքը, աւելացնելով միաժամանակ որ դուբլիկատների անունական լինելը մեծ անյարմարութիւններ է առաջ բերում:

Մի շարք ճառախօսներ սպեկուլեացիայի գոյութիւնը ժխտում էին, ժխտում էին և թանգութեան գոյութիւնը այն չափով, ինչ չափով կայ այլ քաղաքներում: Որպէս իրական միջոց, մատնանիշ էին անում, որ անհրաժեշտ է քաղաքի միջամտութիւնը այդ գործում, թէ նա պէտք է բանայ սեփական շտեմարաններ անհրաժեշտ մթերքների համար, թէ վարչութիւնը պէտք է գտնէ հարկաւոր միջոցներ դրա համար և պէտք է աջակցէ կոօպերատիվ ու սպառողական ընկերութիւններին և այլն:

Նիստը վերջացաւ ժ. 12-ին: Դ.

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Մի բանակռուի առթիւ)

I

Այն վէճը, որ ծագել է Վ. Տէրեանի և Մոսկվայի հայ ուսանողական բիւրոյի միջև, ինձ ևս որոշ չափով զբաղեցնում է, որովհետև այնտեղ շօշափվում են կարևոր խնդիրներ, լուրջ՝ իրանց սկզբունքային հիմնաւորութեամբ:

Յարգելի երիտասարդ բանաստեղծ Վ. Տէրեանը «Մշակի» էջերում արծարծեց իր տեսակէտները «Հոգևոր Հայաստանի» կարևորութեան մասին:

Մի առանձին բաւականութեամբ կարդացի նրա այդ յօդուածներից վերջին մասը, ուր նա «Մարմնաւոր Հայաստանին» գերադասում է «Հոգևոր Հայաստանը»:

Այո, հոգևոր Հայաստան, որը մենք չունինք այսօր ոչ անցեալով և ոչ էլ ներկայով, սակայն որով միայն ապրում է իւրաքանչիւր ազգը և պարծենում իր հոգևոր մեծութեամբ:

Հոգևոր ասելով մենք չը պէտք է հասկանանք հոգևորականութիւն, որպէս եկեղեցականութիւն. ո՛չ, հոգևոր ասելով մենք պէտք է հասկանանք նրա մտաւոր և հոգևոր պատուղների կուլտուրականութիւնը: Հոգեպէս մեծ է այն ազգը, որը թէ իր անցեալում և թէ ներկայումս տուել է մարդկութեանը նշանաւոր գիտնականներ, գրողներ, փիլիսոփաներ, երաժշտագէտներ և այլն, ինչպէս օրինակ՝ հին Յունաստանը, այժմեան Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, իսկ փոքր ազգերից՝ Բելգիան, Լեհաստանը և եթէ կուզէք՝ թափառաշրջիկ ու բոլորից հալածվող հրէան:

Այս ազգերը մեծ են և անմահ՝ անկախ իրանց քաղաքական կազմի արդի վիճակից:

Սակայն միւս կողմից քաղաքականապէս անկախ Պարսկաստանն ու Թիւրքիան քայլ առ քայլ հեռանում են կենդանի ազգերի շարքից, որովհետև նրանք հոգեպէս սնանկ և աղքատ են եղել թէ անցեալում և թէ ներկայումս:

Այստեղից պարզ է թէ ինչու՞ վաղը, եթէ հոգեպէս որևէ զուրկ ազգութիւն իրերի բերմամբ ստանայ քաղաքական (ըստ Վ. Տէրեանի՝ մարմնաւոր) անկախութիւն, նա ապրել չը պէտք է կարողանայ, որովհետև նա առանց հոգու ներկայութեան՝ լոկ դիակ է ներկայացնելու (ինչպէս օրինակ այսօրվայ Ալբանիան):

Այդպիսի դիակին օր առաջ թաղել է պէտք, և նրան թաղում է եթէ ոչ մարդկային ձեռքը, գոնէ պատմութեան բնական ընթացքը:

Չէ որ թաղված են այսօր Մօլդավիան և Վալախիան, Սարդինիան ու Ասորեստանը և այլն: Եւ ո՞վ է յիշում նրանց այսօր, ինչ մի կոթող են կանգնեցրել նրանք՝ իրանց յիշատակը յաւերժացնելու համար:

Ոչ մի...

Սակայն այլ է հոգեպէս մեծ ազգութիւնը:

Եթէ Յունաստանը վաղն և եթ զրկվի այսօրվայ քաղաքական անկախութիւնից, նա այնու ամենայնիւ չի մեռնի, չի անցնի մարդկութեան մտապատկերից, որովհետև նա տուել է նրան Արիստոտելի, Սոկրատի, Անաքսագորայի, Պիֆագորայի և այլոց նման գիտական տիտաններ, որոնք այդ ազգութիւնը յաւէտ յաւերժացնող անձեռագործ արձաններ են: Բաւական է և այն, որ մտաւոր սերունդը, ինչ ազգութեան էլ նա պատկանելիս լինի, դեռ 4-րդ դասարանից սկսած, սկսում է լսել դրանց անունները, որոնք կամաց-կամաց պատուաստում են նրա մտապատկերում յոյների հոգեկան մեծութիւնը:

Բաւական է մտաբերել պատմութիւնից այն դէպքը, որ Նիկոլայ I կայսրը 1825 թ. գահ բարձրանալու հետ միասին՝ իր գործունէութեան առաջին քայլը արեց՝ անտես առնել իր նախորդ Ալեքսանդր I կայսրի հաստատած «Սրբազնագոյն միութեան» լեգիտիմի գաղափարը և պահանջել Թիւրքիայից Յունաստանի կատարեալ անկախութիւնը, որը իրականացաւ 1829 թւի սեպտեմբերի 2-ին Ադրիանուպոլսում կնքված դաշնագրով, մինչդեռ ռուսներին աւելի մօտ ցեղակից Բուլղարիան՝ նոյն ռուսների ձեռքով ազատագրվեց միայն 1878 թւին:

Ահա թէ որքան մեծ և նշանակալից է որևէ ազգութեան համար հոգևոր մեծութիւնը և այդ մեծութեան ինքնուրոյնութիւնը:

Հայը որպէս հոգևոր ազգ՝ թէ իր անցեալում և թէ ներկայումս համամարդկային տեսակէտից առանձին տեղ չէ գրաւել իր հոգևոր կեանքով:

Յիշեցէք մեր հոգեպէս սնանկ, քաղաքականապէս անկախ անմիաբան նախարարներին մեր պատմական անցեալում. յիշեցէք այսօրվայ Անին՝ իր տխուր և մելամաղձոտ աւերակներով՝ յիշեցէք Հայրիկի օրով էջմիածնում հրատարակված «Հայկական Դուման». աչքի առաջ ունեցէք մեր ներկայ ինտելիգենցիայի այսօրվայ փոխադարձ անզիջողութիւնը, և հաւատացած եմ, որ դուք ևս ինձ հետ կը համաձայնվէք, եթէ ասեմ, որ այս պարագաներում մեզ տրված քաղաքական անկախութիւնը մի մեռածին զաւակ է լինելու:

Այս տեսակէտներով արծարծած՝ Վ. Տէրեանի «Հոգևոր Հայաստանը» ինձ համար միանգամայն հասկանալի է: Սակայն ինձ համար անհասկանալի են նրա այս խնդրի մասին ունեցած դասակարգային խմորումները:

Երկուսից մէկը. կամ ազգային պլատֆորմայ և կամ թէ չէ՝ դասակարգային կռիւ:

Մոսկվա Մ. Աղեան

ՀԱՅ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

Պետրօգրադի հիւանդանոցներում եղել են և հետևեալ հայ վիրաւոր զինուորները.

1) Տէր-Յովհաննիսեան Գր., Նոր-Բայազ.: 2) Թովմասեան Կար., Գանձ. Ն. Թաղաւարա: 3) Թունեան Մովսէս, Գանձ. Ն. Մուլտաքենդ: 4) Թևանեան Թևան, Թիֆ. Ն. Թելաւի գաւառ.: 5) Թաղէոսեան Եգոր, Երև. Ն. Նոր-Բայազ. գաւ. Ալաթագ: 6) Թունեան Սարգ., Նուխու Մոզնոյ գիւղ: 7) Թորոսեան Առաքել, Գանձ. Ն.: 8) Թադէոսեան Աւետիս, Երև. Ն. Սուրմ. գաւ. Դաշբուրուն գ.: 9) Թահմիրզեան Սարգ., Գանձ. Ն. Զանգ. գաւ. Մաղրա գիւղ: 10) Օրոյեան Զաք., Երևան Ն. Նոր-Բայազ գաւ.: 11) Օհանջանեան Աւ., Երևան. Ն. Նոր-Բայազ. գաւ.: 13) Օհանջանեան Յովհ., Երևան. Ն. Նոր-Բայազ. գաւ.: 13) Օհանեան Սմբատ, Երևանի. Ն. Երևանի. գաւ.: 14) Օհանեան Հայրօ, Շամախի: 15) Օհանեան Արշակ, Թիֆլ. Ն. Ախալքալաք: 16) Տէր-Յակովբեան Յովհ., Երևան. Ն.: 17) Տանատով Յակ., Գանձ. Ն.: 18) Տուպալով Յար., Գանձ. Ն. Կալատար գիւղ: 19) Տօնեան Մակիչ, Գանձ. Երկէժ գիւղ: 20) Տէր-Խաչատրեան Միսակ, Երևան Ն. Ալէքսանդր. գաւ. Շիշվօռ գիւղ: 21) Տամրազեան Սմբատ, Գանձ. Ն. Ղազախի գաւ. Աչաջուռ գիւղ: 22) Տէր-Կարապետեան, Երևանի գաւ.: 23) Տէր-Վահանեան Մուշեղ: 24) Տէր-Աւետիսեան Մէլքում, Գանձ. Ն. Ուկանապատ գիւղ: 25) Տէր-Յովսէփեան (սպայ): 26) Տէր-Յարութիւնեան Յովհ., Գանձակի Նահ. Արէշի գաւ. Կօչկաշէն գ.: 27) Տէր-Առաքելեան Աղաբէկ, Գանձ. Նահ.: 28) Տուրշեան Խաչ., Երևան. Ն. Նոր-Բայազ.: 29) Տունկանեան Հայր., Գանձ. Ն. Շուշի: 2) Տամրազեան Բալասան: 31) Տէր-Յովհաննիսեան Յովհ., Երևանի. Նահ. Նոր-Բայազէտ:

ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Շամախու թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը Կաթողիկոսի դիւանատնից ստացել է հետևեալ գրութիւնը.

Բարձրագոյն եղանակով հաստատուած՝ յունվար 11-ի օրէնքով արգելվում էր թշնամի պետութեանց հպատակներին Ռուսաստանում վաճառականական և արդիւնաբերական ձեռնարկութիւններ ունենալ, ուստի շատ տեղեր թիւրքահպատակ հայերին առաջարկված էր մինչև ապրիլի 1-ը վերջացնել իրանց գործերը:

Այս օրէնքի գործադրութիւնից ծագող անտեսական քայքայումն ի նկատի ունենալով, ամեն կողմից Նորին Վեհափառութեանը հեռագիրներով և գրութիւններով դիմումներ եղան:

Եւ Վեհափառ Հայրապետն անհրաժեշտ քայլերն արեց՝ ուղարկելով նաև հետևեալ հեռագիրը տէր Փոխարքային.

«Թեմակալ առաջնորդներից, յաջորդներից և թիւրքահպատակ հայերից իւրաքանչիւր օր հեռագիր եմ ստանում, որ Ռուսաստանի շատ քաղաքներում իշխանութեան ներկայացուցիչները յայտարարել են թիւրքահպատակ հայերին՝ մինչև ապրիլի 1-ը լիկվիդացիայի ենթարկել իրանց առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւնները: Ձերդ Պայծառափայլութեանը քաջ յայտնի է իմ հօտի ճգնաժամային դրութիւնը Թիւրքիայում և թիւրքահայերի երախտագիտութեան զգացմունքները դէպի Մեծ Ռուսաստանը: Նրանցից շատերը ներկայումս գտնվում են հայ կամաւորների շարքերում՝ ընդհանուր թշնամու դէմ: Նկատի առնելով երկար ժամանակներից ի վեր Ռուսաստանում ապրող թիւրքահայերի երախտապարտութեան անկեղծ զգացմունքները դէպի ռուսական կայսրութեան շահերը, յարգանօք խնդրում եմ Ձեզ, բարձրապատիւ Կոմս, բարեհաճել միջնորդել, որպէսզի չը գործադրվի վերոյիշեալ կարգադրութիւնը թիւրքահայերի նկատմամբ, որով կազատէք նրանց անտեսական կատարեալ քայքայումից»:

Փոխարքայի օգնական հոֆմէյստեր Պետերսոնն մարտի 16-ին հեռագրել է Վեհափառ Հայրապետին հետևեալը.

«Պատիւ ունեմ տեղեկացնելու Ձերդ Սրբութեանը, թէ մարտի 8-ի մինիստրական խորհրդի որոշման Բարձրագոյն հաստատութեամբ՝ դադարեցվեց 1915 թ. յունվար 11-ի օրէնքի ույժը, որով արգելվում էր թշնամի պետութիւնների հպատակներին պարապել վաճառականութեամբ և արհեստներով, այն է թիւրքահպատակ քրիստոնեաների նկատմամբ, որոնք զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների թոյլտուութեամբ մնացել են իրանց մշտական բնակավայրերում և որոնց իշխանութիւնները չեն արգելել պարապել վաճառականութեամբ և արհեստներով՝ Ռուսաստանում: Այս մասին ֆինանսների մինիստրը հաղորդում է արքունական պալատներին ի գործադրութիւն»:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Անցած 1914 թ. ամառվայ սկզբից Ցաղվերի (Թիֆլիսի նահ.) գիւղի անտառային վայրում պ. Զ. Գ. Արչէվանիձէ հիմնել է մի դպրոց-պանսիոն, ուր դպրոցական թուլակազմ աշակերտներին պարոնը պատրաստում է այն առարկաներից, որոնցից նրանք կտրվել են դպրոցում:

Այդ տարում դպրոցում եղել են 20 երեխայ 6-ից մինչև 12 տարեկան: Դրանցից 4-ը եղել են ռուս, 10-ը վրացի, 6-ը հայ:

Աշակերտները դպրոց-պանսիոնում հետևել են հետևեալ կարգին. վեր են կացել առաւօտ. ժամը 6½-ին, պառկել են երեկ. ժ. 9-ին: Օրվայ ընթացքում զբաղվել են՝ ծեփուածքներով, նկարչութեամբ, մարմնամարզութեամբ, շարժական խաղերով, երգեցողութեամբ և երաժշտութեամբ: Աշխատանքի ընտելանալու համար երեխաները իրանք են հաւաքել իրանց տեղերը, մաքրել կօշիկները, սեղան պատրաստել, ջուր կրել և այգում աշխատել: Շաբաթը երկու անգամ կատարել են էքսկուրսիա: Երեխաները ամեն օր լողացել են գետում և ձուկ որսալով զբաղվել երբեմն:

Այս դպրոց-պանսիոնը առհասարակ լաւ տպաւորութիւն է թողել յայտնի մանկավարժների վրա: Երեխաները այդտեղ կարճ ժամանակում ձեռք են բերել իրանց առողջութիւնը և կորցրած եռանդը:

Պ. Արչէվանիձէի այս դպրոցը լաւ օրինակ կարող է ծառայել ուրիշների համար. և պէտք է ողջունել այսօրինակ դպրոցների հաստատումը մեր երկրում, մանաւանդ Կովկասի փոշոտ, անզարդ և անհրապոյր քաղաքների խեղճ երեխաների համար, որոնք կարօտ են և մաքուր օդի, և ազատ խաղերի: Ր.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանքից

Գանձակ, 27 մարտի

Այս տարվայ Զատիկն եկաւ ու անցաւ. այս տարվայ և միւս տարիների Զատիկների մէջ քիչ տարբերութիւն կար. թէև թանգութիւն է, բայց և այնպէս իրարանցումը մեծ էր. բոլորն էլ շտապում էին «պասխա» ու «թառա ձուկ» գնել Թաթխման երեկոյի համար: Հայերի դարդն ու ցաւն այս տարի մեծ է՝ բազմաթիւ թիւրքահայ գաղթականների շնորհիւ. սրանց համար փոքրիկ ու չունևոր Գանձակը որքան կարողանում է անում է. շորեր են հաւաքում, փողեր են հաւաքում, ամսականներ տալիս, ներկայացումներ սարքում և այլն, և գանձակեցին կարող է հանգիստ սրտով ասել, որ իր հարազատներին ինքն էլ է օգնում: Անցեալները մի քանի խմբեր պտոյտներ արին հայոց թաղը և գաղթականների օգտին հաւաքեցին 600 ր. դրամ ու մօտ մի վագոն հագուստեղէն:

Բացի ընդհանուր թանգութիւնը, քաղաքիս այգետէրերը ու գինեգործները, յայտնի օրէնքի համաձայն, չեն կարողանում իրանց գինիները ծախել և իրանց ապրուստը հոգալ. այս բանը մանաւանդ զգալի է այն մանր գինեվաճառների ու այգետէրերի համար, որոնք միայն դրանով են ապրում: Յովս. Խօջայեանց

Նորակառոյց եկեղեցու օծումը

Կարս, 25 մարտի

Սոյն եկեղեցու շինութեան հարցը սկսվել է սրանից 27 տարի առաջ, իսկ հիմք դրվել է 1905 թ. աշնանը և վերջացել է 1914 թ. աշնանը: Այդ 27 տարվայ ընթացքում՝ յիշեալ եկեղեցու շինութեան հարցը հազար ու մի խոչընդոտների հանդիպելուց յետոյ՝ այսօր Կարսի հայ հասարակութիւնը քաղաքի ընտիր մասում ունի մի փառաւոր ըստ ամենայնի գեղեցիկ սրբատաշ եկեղեցի, որի վրա ծախսված է 82,000 ր., չը հաշուած դռների, կանթեղների, պատկերների, վարագոյրի և այլ զանազան խոշոր ջահերի ծախքը, որ հոգացել են բարեպաշտ անհատներ:

Մարտի 15-ին Երևանի փոխ-թեմակալ Մուրադբէգեան եպ. խուռն բազմութեան ներկայութեամբ օծեց Նորակառոյց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:

Եկեղեցու արևմտեան ճակատում սպիտակ մարմարեայ քարի վրա ոսկէ տառերով արձանագրված է.

«Կառուցաւ եկեղեցիս Կարսի հայ հասարակութեան նուիրատուութեամբ և ջանասիրութեամբ Մինաս աւ.-քահանայ Տէր-Պետրոսեանի»:

Ճշմարտութիւնը պահանջում է խոստովանել, որ եթէ տ. Եսթեր Զալթուկեանը իր հանգուցեալ ամուսնու յիշատակը յարգելու համար չը նուիրէր 25,000 ր., այսօր մենք պատրաստի եկեղեցի չէինք ունենայ և դեռ պիտի ձգձգվէր մի քանի տարի ևս:

Սարգիս Բողդասարեանը երկու նշանաւոր փողոցի անկիւնում քաղաքի ընտիր մասում նուիրեց շինութեան պետին՝ 245 քառ. սաժէն հող, որի սաժէնը արժէ 40 րուբլի:

Եղբ. Համալեանցներն ևս կախեցին եկեղեցու մէջ 700 ր. արժողութեամբ մի փառաւոր ջահ։ Նոյնպէս և Փինաչեանցն իր ծախքով շինել տուեց հիւսիսային, հարաւային և արևմտեան փառաւոր դռները։

Ժամը 1-ին աւարտւեց օծման կարգը, որից յետոյ հ. Մուրադբէգեան աւուր պատշաճի մի կարճ քարոզ խօսեց։

Մուտքը տոմսակներով էր. բազմութիւնը անհաշւելի էր. մեծամասնութիւնը դուրսը մնաց։ Ինժեներական հաշւով՝ եկեղեցին շինված է 1000 հոգու համար, բայց 2000 էլ կը տեղաւորվի։

Ս. Տէր-Մէլքիսեդեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, ցեր. ժ. 12-ին, գեներալ Ա. Զ. Միշլաևսկին մեկնեց Պետրոգրադ, Թողնելով Կովկասում ունեցած իր պաշտօնը։ Նրան ճանապարհ էին դնում մի շարք բարձրաստիճան անձինք և նրա ծառայակիցները։

◆ Ապրիլի 3-ին ռուսական ակումբում հրաժեշտի ճաշ տրվեց Կովկասից մեկնող գեներալ Ալէքսանդր Զ. Միշլաևսկիի պատւին մի խումբ ծառայակիցների կողմից։

◆ Այսօր, կիրակի, ցերեկ. ժամը 11-ին Գրական-Գեղարվեստական Սալօնում կը կայանայ Ժողովրդական Երաժշտական Ընկ. տարեկան ընդհանուր ժողովը։ Կը քննվեն տարեկան հաշիւը, 1915 թ. նախահաշիւը ու կը լինեն ընտրութիւններ նախագահի, վարչութեան ու վերստուգիչ յանձնաժողովի անդամների։ Ժողովրդական Երաժշտական Ընկ. պարբերաբար տալիս է օպէրային ներկայացումներ Ժողովրդական Տան Թատրոնում։

◆ Վաղը, երկուշաբթի, երեկ. ժամը 7-ին Գրական-Գեղարվեստական Սալօնում կը կայանայ հայ կուլտուրական 16 ընկ. ներկայացուցիչների խորհրդակցութեան շարունակութիւնը՝ Թիֆլիսում Ֆորում հիմնելու մասին։

◆ Մարտի 31-ին քաղաքային սպանդանոց են բերված վաճառելու համար խոշոր եղջիւրաւոր անասուններ—տեղական՝ 182 հատ, որից վաճառված է 77-ը, 54 ր. 43 կ. միջին արժողութեամբ, գոմէշներ՝ 52 հատ, որից վաճառված է 33-ը, 76 րուբլի միջին արժողութեամբ, հորթեր բերված է եղել 8 հատ և վաճառված է 8 ր. 75 կ. միջին արժողութեամբ։ Ոչխար բերված է 221 հատ, որից վաճառված է 147-ը 7 ր., 81 կ. միջին արժողութեամբ։ Գառներ բերված է 370 հատ և վաճառված է 179-ը, 3 ր. 82 կ. միջին արժողութեամբ։ Խոզեր՝ 20 հատ և վաճառված է հատը 6 ր. 60 կ. միջին արժողութեամբ։ Մորթված է 192 հատ խոշոր եղջիւրաւոր անասուն, 9 հորթ, 226 ոչխար, 251 գառ և 20 խոզ։

◆ Վերջին օրերի յորդ անձրևների հետևանքով Կուր գետի մակերևոյթը բարձրացել է 8 ոտնաչափ, ծածկելով շրջապատի բոլոր այն տեղերը, որտեղից աւազ էր հաւաքվում։ Այդ պատճառով Ջրհեղձներին փրկող ընկ. շրջանային վարչութիւնը համապատասխան կարգադրութիւն է արել քաղաքի բնակիչների և նրանց գոյքը փրկելու մասին այն դէպքում, երբ քաղաքի Պեսկովսկայա մասը հեղեղվի։

◆ Կովկասի քաղաքների միութեան լիազօրը երէկ արևմտեան սահմանը և Գալիցիա ուղարկեց զօրքի համար 116 արկղ (250 պուդ 37 ֆ.) չոր միրգ և 15 արկղ մարմելադ, որ պատրաստել են փոխարքայի դիւանատան զեմստվային բաժանմունքը և Կովկասի Գիւղատնտեսական Ընկ.-ը։

◆ Նաւթլուղի հիւանդանոցը բաւականին ընդարձակվել է։ Մահճակալների թիւը հասցված է 2000-ի։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքներում դասախօսող Ս. Ն. Կակաբաձէ հրաժարական է տուել։

◆ Ապրիլի 12-ին նշանակված է ժողովրդական համալսարանների ընկ. անդամների տարեկան ընդհանուր ժողովը։

◆ Ցանիկուլէքի երթևեկութիւնը ապրիլից կատարվելու է առաւօտ. ժամը 8-ից մինչև երեկ. ժ. 11-ը։

◆ Ստացանք «Բազմավէպ» ամսաթերթի փետրվար և մարտ ամիսների № №-ները։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Ուրբաթ, ապրիլի 3-ի երեկոյեան Գրական-Գեղարվեստական Սալօնում կայացաւ Գր. Վարդանեանի նախագահութեամբ հայոց կուլտ. և բարեգործ. ընկ. ներկայացուցիչների խորհրդակցութիւնը Թիֆլիսում հիմնելու Ֆորում։ Տ. Նազարեան, որը և յղացել է այդ միտքը, արեց համառօտ զեկուցում՝ թէ ինչպէս կազմակերպել այդ շարժումը, սակայն ինքը հրաժարվեց կազմել ծրագիր և նախահաշիւ, առաջարկելով որ խորհրդակցութիւնը կազմէ այդ։

Ժողովականները երկար, թեր և դէմ, զրոյց ունեցան նախահաշւի շուրջ, սակայն միաձայն գտան Ֆորումի նպատակը շատ օգտակար։ Տ. Նազարեանի առաջարկն է հռոմէական նախկին Ֆորումի, Լօնդօնի արդի Կրիստալ-Պալէսի նման հայկական մինիատիւր ֆորում հիմնել, ուր հայ ինտելիգենցիան առանց քաղաքական և կուսակցական հայեացքների տարբերութեան մի վայր ունենայ հաւաքվելու և շփվելու ժողովրդի հետ։

Եւ որովհետև Ֆորումի գաղափարը մարմնացնելու համար Տ. Նազարեան ժամանակամիջոց էր նշանակել մինչև ապրիլի 7-ը, (հակառակ դէպքում այդ ֆորումը կը հիմնվի այլ ձևով), ուստի ներկայ եղող ընկերութիւնների ներկայացուցիչները որոշեցին երկուշաբթի, ապրիլի 6-ի երեկոյեան կրկին ժողովվել և վերջնական եզրակացութեան գալ։ Ֆորումը պիտի հիմնվի Մուշտայիդի հանդէպ՝ Միքայէլեան պրոսպեկտի և Մուշտայիդեան փողոցի վրայի այգում։ Ֆորումը կունենայ ընդարձակ կաֆէ, սինեմատօգրաֆ, արտասանութիւնների, կաբարէների, երաժշտութեան համար ամբիօններ և այլն։ Ուշ լինելու պատճառով, Ստ. Կանայեանի դասախօսութիւնը յետաձգվեց միւս jour fixe-ին։

Z.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական ներկայացում

Հանգուցեալ վիպասան Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման պէտք է համարել մեր պատմական պիէսների մէջ ամենաառաջնակարգը, եթէ չասենք ամենատաղանդաւորը։ Վիպասանի հրաշալի, մաքուր գրական լեզուն, սիրուն պատկերաւորումները, բեմական աչքով հանգոյցները, դէպքերի հարազատութիւնը ստիպում են հանդիսատեսին մեծ հետաքրքրութեամբ հետևել դրամայի զարգացմանը սկզբից մինչև վերջ։

Այնպէս որ՝ այդ կողմից «Ռուզանի» ընտրութիւնը տիկ. Արմէնեան-Դուրեանի բենեֆիսին՝ շատ գովելի է։

Տիկին Արմէնեան «Ռուզանի» պատասխանատու դերը տարաւ աջող, մանաւանդ չորրորդ տեսարանում. միակ նկատողութիւնը, որ կարող ենք անել յարգելի դերասանուհուն՝ դա նա է, որ տիկինը շատ շուտ է սկսում անցնել ձայնի բարձր տոներին և այդպէս էլ շարունակում է մինչև վերջ՝ ընկնելով միօրինակ, հետևապէս և ոչ ախորժելի ինտօնացիայի մէջ. այն ինչ՝ եթէ ձայնի այդ բարձրացումը տեղի ունենայ ելևէջներով և միայն յատուկ պաթեթիկ տեղերում՝ նրա ամենաբարձր մասով—դրանով տիկնոջ թէ խաղը և թէ գեղեցիկ խաղից ստացված տպաւորութիւնը կուժեղանայ և կը դառնայ բազմագան ու տպաւորիչ։

Լաւ էին միւս դերակատարները՝ սկսած Զարիֆեանից մինչև Լաքան։

Մի քանի խօսք այս վերջին դերասանի՝ պ. Լաքայի մասին։ Մենք այդ դերասանին ահա տեսնում ենք հայկական բեմի վրա չորս տարի. ճիշդ է, տեսնում ենք քիչ, երկրորդական, իսկ շատ անգամ երրորդական դերերում, սակայն չենք կարող չը նկատել, որ յանձին Լաքայի մենք ունենք մի առաջնակարգ արտիստ այս բառիս ամենալայն իմաստով։

Այս եզրակացութիւնը արդիւնք է մեր չորս տարվայ ամենաուշադիր դիտողութեան. և եթէ այսօր Լաքայի անունը չէ փայլում և համեմատաբար անծանօթ է հայ հասարակութեանը, այդ մենք վերագրում ենք մեր պրեմիէրներին...

Այդ գիշեր խանի դերում Լաքան կլասիքական էր՝ հագուստով, գրիմով, շարժումներով, միմիկայով. մի խօսքով՝ մենք մեր առաջ տեսանք մի իսկական արտիստի խաղ, որից աչք հեռացնել չէր լինում։

Ժամանակ է հանել նրան այն վարագոյրի ետևից, ուր տարիներ շարունակ այնպիսի զգուշութեամբ պահել են այդ արտիստին։ Նրա առոյգ տաղանդը, իրան յատուկ դերերում, պահանջում է լայն ասպարէզ՝ այս անգամ ոչ թէ փորձվելու, այլ փայլելու և գեղարուեստական հաճոյք պատճառելու հասարակութեանը։

Ա. Ա.

Ժողովրդական Տուն

Հինգշաբթի, ապրիլի 2-ին, Ժող. Տանը Վ. Փափազեանի մասնակցութեամբ ներկայացվեց «Ոճրագործի ընտանիքը»։

Կորրադոյի դերում հանդէս եկաւ Վ. Փափազեան։

Այդ էր, պիտանին անոյշի հետ զուգորդված գրօսանքը, որին հրաւիրել էր հայոց թատրոնական սեկցիան հայ թատերասէր հասարակութիւնը։

Հոծ բազմութեամբ աչքի ընկնող այնտեղ մատաղ սերունդն էր, այն՝ որ մերձաւոր ապագայի մեր յոյսն է։

Սիրելի էր տեսնել այն ոգևորութիւնը, որով ներշնչված բորբոքվում էր այդ հասարակութիւնը երիտասարդ արուեստագէտի հանդիսացրած քաջարուեստ խաղի հանդէպ։

Խելագարական ծափահարութիւնների և խլացուցիչ սուր սուլոցների թոհբոհը, որը այդ երեկոյ դրուատիքի բնոյթ ունէր, զմայլանքի վերին խայն էր ներկայացնում։

Մտածեցի, իմաստուն ընտրութիւն օգտաշահ թատերախաղերի այդպիսի քաջարուեստ, յափշտակող դերակատարութեամբ, ի՜նչ ցանկալի սերունդ կը պատրաստէ ասպարէզի վրա վաղվայ գործի համար։

Կորրադո — Փափազեան, գեղարուեստի մարդը, սիրող սիրտը, ակամայ ոճրագործը, 14 տարի տաժանակրութեան շղթաների մէջ իր կեանքը հիւծած, և երբ ծամելով այդ շղթաները մաշածն ու խորտակածը, մի անգամ իր կապանքները թօթափած՝ այժմ խանձող կարօտով, սիրոյ տոչորմունքով որոնում է իր սիրասուններին՝ կնոջն ու դստրիկ Աղդային։

Գտնում է նրանց բարեգութ թևերի տակ ապաւէն գտած, խնամված ու գուրգուրված՝ ազնուական սիրով։ Գտնում է, և գտած պահին՝ կորցնելու անխուսափելի հարկի տակ տրորվում։ Նենգը փախստականի տեղը յայտնում է ոստիկանութեանը։

Կորրադոն և՛ նենգ և՛ ոստիկանութիւն կորագլուխ յուսախաբ թողնելու միջոցն իր հետ ունի՝ կուրծքի վրա. թոյնը։

Սրտակեղեք, յաւիտեան անյոյս անջատումն այս անգամ։ Բայց նախ, այդ ճմլիչ վայրկեանում, իր սրտի հատորներին իրանց ազնիւ բարերարին աւանդելու սրտայոյզ խնամքը։

Հոգի մորկող, սիրտ փղձկեցնող տեսարաննե՜ր։ Corrado—Փափազեան, բեմի վրա երեւոյթ գործելուց մինչև թոյնի ներգործութեան տակ գալարվելն և հուսկ, կծկըված, երբև կոճղ՝ աթոռի վրայից յատակի վրա թնդիւնով տապալվելն, ա՛յնպէս տարաւ գործողութիւնը, և իր բոլոր աղէկտուր յոյզերով ա՛յնպէս համակեց Ժողովրդական Տունը, որ էլ սա, մի արհաւրական երազապրումից սթափվելով, փրկված ի պէս, վերջին վարագոյրն իջնելիս, անձնատուր եղաւ մի խելակորոյս զմայլանքի, խելայեղ յափշտակութեան, և պատանի սերունդը վերոգրած, դիւահարական ասեմ, ցոյցն արաւ, ուր մուֆթ, գլխարկ, ձեռաքսակ, ծաղիկներ խառնիխուռն թռչկոտում էին բեմն ու յետ՝ երբ վարագոյրն հարկադրված վերանում էր և դերասանն երևում։

Օրվայ տեսարանի վրա այդ իբր անկապ ու թռուցիկ ակնարկն անելուց յետոյ՝ ես կը վերադառնամ պարոն Փափազեանին։

Ա. Մ. Եզեկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՒՏՆՈՒՄ Է

ԿԱՐՍ, Արամին.—Ձեր գրութիւնը քաղաքիդ կլուբում տիրող կարգերի մասին՝ անկարող եղանք տպել։

ՄՈՍԿՎԱ, Ալ. Մել.-Աղաջ.-ին.—Ձեր յօդուածը՝ «Թղթադրամի նոր յաւելումն»՝ մեզնից անկախ պատճառներով լոյս չընծայեցինք «Մշակում»։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի	Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	»	Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6	(արագ) »		12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	»	Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	»	Ջուլֆա	10 ժ. 23 ր. երեկ.
	»	Բօրժոմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր. առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12-1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—55

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատօր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—51

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1011.



(կ.) 50—19

ՀՕՆՕՐՐԷԱ
ունենալու դէպքում, թէ սուր և թէ խրօնիքական բնաւորութեան, նոյնպէս և նրա հետևանքների ժամանակ պէտք է ընդունել
„ԱՐՄԱՏԻՆ“
դեղը։ «Արմատինը» միանգամայն անվնասակար է օրգանիզմի համար և աջողութեամբ կարող են գործածել թէ տղամարդիկ և թէ կանայք։ «Արմատինը» գործածելու ժամանակ չէ պահանջվում ոչ մի սրսկումն, լուացումն, խարումն, խողովակի լայնացումն և այլն։ Կատարելապէս բուժվելու համար պիտի գործածել 6 արկղիկ։
«Արմատինի» 1 արկղիկը արժէ 1 ր. 75 կ.։
Վաճառվում է դեղատներում եւ դեղավաճառանոցներում։
Կեղծիքներից խուսափելու համար՝ պահանջեցէք միայն Ա. Եա. Ակուլեանցի «Արմատինը», սագածաղկի էտիկէտով։
(հ. կ.) 174. 0—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
Հայաստանի տնտեսական հեռանկարները
ԳՐՔՈՅԿԸ
Գինն է 20 կոպէկ։
Ցիշեալ գրքոյկը ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրութեանը, կանխապէս ուղարկելով գրքոյկի արժէքը և ճանապարհածախսի համար էլ 14 կ.։
(օ. մ.) 198. 5—3

„ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ“
Նոր ազգային երգարան
Հայրենասիրական ոտանաւորներով երկրորդ բարեփոխված տպագրութեամբ՝ ԱՆԴՐԱՆԻԿԻ և բոլոր խմբապետների և իրանց բանակների նկարներով։
Գինն է 40 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ, Эриванская пл. Писчебумажный магазинъ. К. Г. АРЗУМАНЯНЦУ.
Նոյնպէս և բոլոր գրավաճառներին։
Գումարով գնողներին լինում է զեղչ։
(չ. ու. կ.) 141. 10—9

Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱ
նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէջեպ
րով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրվ
ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգ
շութեան կանոններ տրեպերով և այլ ցաւերով չը վ
րակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօն
նիքական տրիպէրի և բժշկութեան մասին, բէջեպ
ներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տ
սակ պատահական փորձանքներ, հիւանդութիւնն
թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնու
Բազմաթիւ անոյն դեղեր և խորհուրդներ։ Զատ պա
ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժե
գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մ
օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գի
30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ
նէկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծ
ծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20
Այս երեք գրքերը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Նիկարմայի շալվա
ծիծաղաշարժ վօդըվիլ չափահասների համար (գինն
20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Մ
նայն դաղաղում», պատմուածք հայ-թուրքական կռ
ներից, դիւակների նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առա
ջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ
գնել նամակներում, հակառակ դէպքում պատասխա
նատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէս՝ Тифлисъ. Семе
новская ул. № 9. Медицинскому фельдшеру
Г. Есаянцу.
(հ. կ.) 327. 100—8



ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ
ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑ
Լոյս տեսաւ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԷՐՋԵԱՆ
«Մարդկային մտքի քաջագործութիւնը կ
գործնական հոգեբանութիւն» ձեռնարկը։
Այս նոր ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է,
րող է սովորել հիպնօզացնել. ներշնչել և սովորել նոր հոգեբանութիւ
գործածել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր ձեռնարկի արժէ
ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէ
Ռուսաստանից—Сусаннѣ Шекерджянъ, Вельяминовская
№ 22, Тифлисъ. Արտասահմանից—Sousanna Shekerjian, 22 Weliaminovskaya, Tif
Caucasus, Russia. 106. 25—5
(կ.)

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ա. ՎԱԶԵԱՆՑԻ ծախքով լոյս ընծայեց
Նիւթեր հայ մելիքութեան մասին
Բ. պրակը՝
ԴՕՓԵԱՆՔ և ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՔ
Գրեց Կարապետ եպիսկոպոս ◆—◆ Գինն է 50 կոպէկ։
«Նիւթերի» Ա. պրակը՝ Դիզակի Մելիքութիւնը Առաքել վարդապետի արժէ 30 կ
Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ.
(կ. հ.) 173. 6—5

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իսգբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-5
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԷԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներո
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieu
(հ.կ.) 551. 0—85

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.